Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 726 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 613-Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ԵՎ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԵՐԻ ՏՈՒԺԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետության Տավուշի և Լոռու մարզերում 2023 թվականի հունիս և օգոստոս ամիսներին հորդառատ անձրևի և կարկտահարության հետևանքով տուժած 855 անապահով տնային տնտեսության կարիքների գնահատում և աջակցության ցուցաբերում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարկերից, տուրքերից և այլ պարտադիր վճարներից ազատման արտոնություններից օգտվելու նպատակով |
| 3. | Բարեգործը | Կարմիր Խաչի Միջազգային Ֆեդերացիա |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայկական Կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ՝ 00006023) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Տավուշի և Լոռու մարզեր<br>Բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 168,408,057 դրամ |
| 7. | Բարեգործությունն ստացողը | Հայաստանի Հանրապետության Տավուշի և Լոռու մարզերում հորդառատ անձրևի և կարկտահարության հետևանքով տուժած բնակավայրերի (Ստեփանավան, Լոռի Բերդ, |

| | | |
|---|---|---|
| | | Ուռուտ, Բովաձոր, Արևաշող, Մեծ Այրում, Իջևան, Ալավերդի, Սանահին, Ակներ, Օձուն, Ամոջ, Հագվի, Աքորի, Հաղպատ և Ծաղկաշատ) (ըստ նախնական տվյալների) առավել խոցելի 855 տնային տնտեսություններ կստանան կանխիկ աջակցություն՝ իրենց հրատապ կարիքները հոգալու նպատակով: Ծրագրի թիրախ խումբը վերջնական ձևավորվելու է համայնքապետարանների և մարզպետի աշխատակազմերի հետ իրականացվող կարիքի գնահատումից և շահառուների գրանցումից հետո: Բացի նշված գնահատումները՝ համայնքների հետ հանդիպումներ են տեղի ունենալու նաև ջրի միջոցով փոխանցվող վարակիչ հիվանդությունների և դրանց կանխարգելման, ինչպես նաև աղետների ռիսկի իրազեկման, մասնավորապես կլիմայական մարտահրավերների վերաբերյալ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2023 թվականի օգոստոսի 21-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողություններն են ՝<br>1) կարիքի գնահատում և շահառուների գրանցում - նախատեսվում է իրականացնել 2023 թվականի օգոստոսի 21-ից մինչև 2023 թվականի նոյեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում.<br>2) դրամային աջակցության տրամադրում – 133,807,500 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի օգոստոսի 21-ից մինչև 2023 թվականի նոյեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում.<br>3) կրթական նյութերի տպագրություն՝ 1,250,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի օգոստոսի 21-ից մինչև 2023 թվականի նոյեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածում.<br>4) գնահատման և հետբաշխման մոնիթորինգ, «Քաղաք դասեր» սեմինարի կազմակերպում - 3,750,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 1-29-ն ընկած ժամանակահատվածում. |

| | | |
|---|---|---|
| | | 5) անձնակազմի և կամավորների տեղափոխման համար վառելիքի ձեռքբերում – 1,400,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի օգոստոսի 21-ից մինչև 2023 թվականի նոյեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում.<br>6) կամավորների ճանապարհածախսի փոխհատուցում՝ 2,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի օգոստոսի 21-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը ընկած ժամանակահատվածում.<br>7) աշխատավարձ ծրագրի անձնակազմի համար՝ 14,478,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի օգոստոսի 21-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում.<br>8) մարզային մասնաճյուղերի համար հաղորդակցման, և պահպանման ծախս՝ 11,722,557.1 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի օգոստոսի 21-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝<br>1) անձնակազմի և կամավորների տեղափոխման համար վառելիքի ձեռքբերում –1,400,000 դրամ<br>2) կրթական նյութերի տպագրություն - 1,250,000 դրամ<br>3) «Քաղած դասեր» սեմինարի կազմակերպում, հյուրանոցային ծառայության ձեռքբերում - 1,800,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ 27,600,557.1 դրամ արժողությամբ, որը ներառում է աշխատավարձ ծրագրի անձնակազմի համար՝ 14,478,000 դրամ, վառելիքի, մարզային մասնաճյուղերի համար հաղորդակցման, և պահպանման ծախս՝ 13,122,557.1 դրամ: |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի և Լոռու մարզ-պետի աշխատակազմերի և համայնքապետարանների հետ սերտ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ավարտական հաշվետվություններ են ներկայացվելու Կարմիր Խաչի Միջազգային Ֆեդերացիային: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեն իրականացնելու է գործունեության անմիջական վերահսկումը: ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշման 25-րդ կետի համաձայն, նույն որոշմամբ սահմանված ծավալով ու պարբերականությամբ ներկայացվելու են տեղեկություններ լիազոր մարմնին: |

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

20.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ